

17.11.2014թ.

Ժ.11: 00

Մասնակցում էին՝

Ս.Մնացականյան (խորհրդի նախագահ), Գ.Անանյան, Գ.Գևորգյան, Ա.Սաֆյան, Յու.Պողոսյան, Ս.Դավթյան, Լ.Պետրոսյան (խորհրդի անդամներ), Հ. Գրիգորյան (խորհրդի քարտուղար)

Հրավիրված էին՝ Լ.Միրզոյան (ՀՀ ԱՎԾ նախագահի տեղակալ), Վ.Սարոյան (իրավաբանական բաժնի պետ), Դ.Մարտիրոսովա (տնային տնտեսությունների հեղափոխությունների բաժնի պետ), Ա. Ավագյան (գյուղատնտեսության վիճակագրության բաժնի պետ), Գ. Նշանյան (գյուղատնտեսական համալսարանի հաշվառման պլանավորման և ծրագրամեթոդաբանական բաժնի պետ), Ն. Բաղդասարյան (սոցիալական ոլորտի և բնապահպանության վիճակագրության բաժնի պետ), Մ. Խաչատրյան (քիզնես ռեգիստրի ընտրանքի և դասակարգիչների բաժնի գլխավոր մասնագետ):

Օրակարգի նախագծում հինգ հարց.

1. «Հետգյուղատնտեսական հաշվառման որակի ստուգման հարցաթերթի, տնտեսությունների ցուցակի, ուղեկցող թերթի և ՀՀ գյուղատնտեսական համատարած հաշվառման արդյունքների որակի գնահատման հետգյուղատնտեսական հաշվառման կարգի նախագծերը հաստատելու մասին» հարցը:

/Զեկուցող՝ Ա.Ավագյան, Գ.Նշանյան/

2. «Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության կողմից՝ 2013 թվականին իրականացված տնային տնտեսությունների կենսապայմանների ամբողջացված հետազոտության անվանագրծված տվյալների բազան Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկին տրամադրելու թույլտվության մասին» հարցը:

/Զեկուցող՝ Դ.Մարտիրոսովա/

3. «Գրադարանների գործունեության մասին» Ձև 6-ԳՄ (տարեկան) պետական վիճակագրական հաշվետվության ձևը և լրացման հրահանգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2002 թվականի օգոստոսի 19-ի թիվ 193-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» հարցը:

/Զեկուցող՝ Ն.Բաղդասարյան/

4. Հաղորդում արտասահմանյան գործուղումների հաշվետվությունների մասին.

4.1. Հաղորդում՝ Լեհաստանի Վարշավա քաղաքում 2014 թվականի հոկտեմբերի 14-ից 17-ը Լեհաստանի կենտրոնական վիճակագրական գրասենյակի կողմից կազմակերպված «Վարչական ռեգիստրների օգտագործումը վիճակագրական տվյալների ստացման համար» ուսումնական դասընթացին մասնակցելու վերաբերյալ:

/Զեկուցողներ՝ Ն. Բաղդասարյան, Մ. Խաչատրյան /

4.2. Հաղորդում՝ Բելգիայի Թագավորության Բրյուսել քաղաքում 2014 թվականի նոյեմբերի 5-ին «ՀՀ-ԵՄ առևտրի, տնտեսական և համապատասխան իրավական հարցերով ենթակոմիտեի հերթական՝ 13-րդ նիստին» մասնակցելու վերաբերյալ:

/Զեկուցող՝ Ա.Սաֆյան/

4.3. Հաղորդում՝ Շվեյցարիայի Ժնև քաղաքում 2014 թվականի նոյեմբերի 2-ից 7-ը ՄԱԿ-ի Եվրոպայի տնտեսական հանձնաժողովի /ԵՏՀ/ Շրջակա միջավայրի քաղաքականության կոմիտեի և Եվրոպական Վիճակագիրների Կոնֆերանսի հրավերով «Բնապահպանական վիճակագրական տեղեկատվության որակի հարցերին նվիրված սեմինարին» և «Վիճակագիրների և բնապահպանների միասնական աշխատանքի նպատակային խմբի 9-րդ նստաշրջանի՝ Բնապահպանական մոնիտորինգի և գնահատման աշխատանքային խմբի 15-րդ նստաշրջանի աշխատանքներին» մասնակցելու վերաբերյալ:

/Զեկուցող՝ Յու.Պողոսյան/

5. Այլ հարցեր

ՀՀ վիճակագրության պետական խորհրդի նախագահի կողմից ներկայացվեց խորհրդի նիստի օրակարգի նախագիծը, որը հաստատվեց ամբողջությամբ և միաձայն:

/Բովերակության արդյունքները-կողմ՝ 7, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/

Լսեցին՝

1. «Հետզոյդատնտեսական հաշվառման որակի ստուգման հարցաթերթի, տնտեսությունների ցուցակի, ուղեկցող թերթի և ՀՀ գյուղատնտեսական համատարած հաշվառման արդյունքների որակի գնահատման հետզոյդատնտեսական հաշվառման կարգի նախագծերը հաստատելու մասին» հարցը:

/Զեկուցող՝ Ա.Ավագյան, Գ.Նշանյան/

Որոշեցին՝

հաստատել «Հետզոյդատնտեսական հաշվառման որակի ստուգման հարցաթերթը, տնտեսությունների ցուցակը, ուղեկցող թերթը և ՀՀ գյուղատնտեսական համատարած հաշվառման արդյունքների որակի գնահատման հետզոյդատնտեսական հաշվառման կարգը» համաձայն իրենց հավելվածների:

/Անհատական/

/Քվեարկության արդյունքները- կողմ՝ 7, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/

Լսեցին՝

2. «Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության կողմից՝ 2013 թվականին իրականացված տնային տնտեսությունների կենսապայմանների ամբողջացված հետազոտության անվանագրքով տվյալների բազան Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկին տրամադրելու թույլտվության մասին» հարցը:

/Զեկուցող՝ Դ.Մարտիրոսովա/

Որոշեցին՝

թույլատրել Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության աշխատակազմի տնային տնտեսությունների հետազոտությունների բաժնին՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկին տրամադրել Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության կողմից 2013 թվականին իրականացված տնային տնտեսությունների կենսապայմանների ամբողջացված հետազոտության արդյունքում ձևավորված անվանագրքով տվյալների բազան՝ զուտ գիտահետազոտական աշխատանքների իրականացման համար օգտագործելու, այլ անձանց չփոխանցելու, չվաճառելու, չհրապարակելու և այլ կարգով չտարածելու պայմաններով:

/Անհատական/

/Քվեարկության արդյունքները- կողմ՝ 7, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/

Լսեցին՝

3. «Գրադարանների գործունեության մասին» Ձև 6-ԳՄ (տարեկան) պետական վիճակագրական հաշվետվության ձևը և լրացման հրահանգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2002 թվականի օգոստոսի 19-ի թիվ 193-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» հարցը:

/Զեկուցող՝ Ն.Բաղդասարյան/

Որոշեցին՝

հաստատել՝ «Գրադարանների գործունեության մասին» Ձև 6-ԳՄ (տարեկան) պետական վիճակագրական հաշվետվության ձևը և լրացման հրահանգը համաձայն հավելված 1 և 2-ի և ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2002 թվականի օգոստոսի 19-ի «Հաշվետվություն գրադարանների գործունեության մասին» Ձև թիվ 6-գմ պետական վիճակագրական հաշվետվության ձևը և լրացման հրահանգը հաստատելու մասին» թիվ 193-Ն որոշումը:

/Նորմատիվ/

/Քվեարկության արդյունքները- կողմ՝ 7, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/

Լսեցին՝

4. Հաղորդում արտասահմանյան գործուղումների հաշվետվությունների մասին.

4.1. Հաղորդում՝ Լեհաստանի Վարշավա քաղաքում 2014 թվականի հոկտեմբերի 14-ից 17-ը Լեհաստանի կենտրոնական վիճակագրական գրասենյակի կողմից կազմակերպված «Վարչական

ոեգիստրների օգտագործումը վիճակագրական տվյալների ստացման համար» ուսումնական դասընթացին մասնակցելու վերաբերյալ:

/Զեկուցողներ՝ Ն. Բաղդասարյան, Մ. Խաչատրյան /

4.2. Հաղորդում՝ Բելգիայի Թագավորության Բրյուսել քաղաքում 2014 թվականի նոյեմբերի 5-ին «ՀՀ-ԵՄ առևտրի, տնտեսական և համապատասխան իրավական հարցերով ենթակոմիտեի հերթական՝ 13-րդ նիստին» մասնակցելու վերաբերյալ:

/Զեկուցող՝ Ա.Սաֆյան/

4.3. Հաղորդում՝ Շվեյցարիայի Ժնև քաղաքում 2014 թվականի նոյեմբերի 2-ից 7-ը ՄԱԿ-ի Եվրոպայի տնտեսական հանձնաժողովի /ԵՏՀ/ Շրջակա միջավայրի քաղաքականության կոմիտեի և Եվրոպական Վիճակագիրների Կոնֆերանսի հրավերով «Բնապահպանական վիճակագրական տեղեկատվության որակի հարցերին նվիրված սեմինարին» և «Վիճակագիրների և բնապահպանների միասնական աշխատանքի նպատակային խմբի 9-րդ նստաշրջանի՝ Բնապահպանական մոնիտորինգի և գնահատման աշխատանքային խմբի 15-րդ նստաշրջանի աշխատանքներին» մասնակցելու վերաբերյալ:

/Զեկուցող՝ Յու.Պողոսյան/

Որոշեցին՝

արտասահմանյան գործուղումների հաշվետվությունների մասին հաղորդումներն ընդունել ի գիտություն

/Անհատական/

/Քվեարկության արդյունքները- կողմ՝ 7, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/

ՆԱԽԱԳԱՀ

Ս. ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ

ՔԱՐՏՈՒՂԱՐ

Հ. ԳՐԻԳՈՐՅԱՆ